

«Շիրակի Մարզի Սարակապի Համայնքի Իրավունքաված Վարչական Հսկողութեան Արդյունքների Մասին»

«4» հոկտեմբերի 2013 թ.

գ. Սարակապ

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 110 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազ Գևորգյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Զորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Սարակապի գյուղական համայնքի ղեկավար Արծրունի Խաչատրյանի, Սարակապի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի սեպտեմբերի 13-ին և ավարտվել է 2013 թվականի սեպտեմբերի 27-ին:

**Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝**

Սարակապի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի սեպտեմբերի 24-ի տեղեկանքը նեղակայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 13 արտահերթ նիստի քննարկմանը, մշակվել և գործողության մեջ է դրվել միջոցառումների ժամանակացույց և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել տեղեկանքում արձանագրված համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման գործում տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: Վարչական հսկողության արդյունքում արձանագրված թերությունների և բացթողումների, ինչպես նաև «Տեղական

ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար համայնքի ղեկավարի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 14 կարգադրությամբ աշխատակազմի քարտուղարը ենթարկվել է կարգապահական տույժի:

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի նորընտիր ավագանին 2012 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 12-Ն որոշմամբ ընդունել է իր կանոնակարգը և ուժը կորցրած է ճանաչել ավագանու կանոնակարգը ընդունելու վերաբերյալ ավագանու նախորդ որոշումը:

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2011 թվականի մայիսի 25-ի թիվ 10-Ն որոշմամբ (արձ. թիվ 1) հաստատել է համայնքի 2011-2014 թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի զարգացման 2011-2014 թթ. քառամյա ծրագրում անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին: Կատարվել են համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում, քառամյա ժամկետում բյուջեի կատարման կանխատեսումներ և ծրագրում ներառված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսվող ներդրումների ապահովման հիմնավորումներ: Փաստաթղթում ներառված ծրագրային աշխատանքներում նշվել են առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ու դրանց աղբյուրները, իրականացման ժամկետները, ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումներն ու կատարման պատասխանատուները:

Սակայն համայնքի բյուջեի սեփական եկամուտների ոչ լիարժեք հավաքագրման և այլ միջոցներ ներգրավելու հնարավորությունների բացակայությամբ պայմանավորված զարգացման ծրագրում ներառված թվով 7 ծրագրային աշխատանքներից կատարվել են ընդամենը 2-ը: Պետական բյուջեի և համայնքի միջոցներով վերանորոգվել է բնակավայր մտնող 3.5 կմ ճանապարհը, մասնակիորեն վերանորոգվել են միջհամայնքային և դաշտամիջյան առանձին ճանապարհներ, համայնքի ուժերով մաքրվել են հեղեղեղատարները և ամրացվել հունները: Աշխատանքներ են տարվում գյուղապետարանի շենքի վերանորոգման և փողոցների լուսավորության ցանցի անցկացման ուղղությամբ: Դեռևս չեն կատարվել մշակույթի տան շենքի վերանորոգման, խմելու ջրի մատակարարման բարելավման և հանգստի գոտու հիմնման աշխատանքները:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի 2011-2014 թթ. զարգացման ծրագրում ներառված ծրագրային աշխատանքների կատարման ընթացքին:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները (ավագանու որոշումներ՝ 25.01.2011թ. թիվ 3-Ն, 19.01.2012թ. թիվ 3-Ն և 21.01.2013թ. թիվ 3-Ն):

Համայնքի ավագանին 21.01.2011թ. թիվ 1-Ն, 11.01.2012թ. թիվ 1-Ն և 17.01.2013թ. թիվ 1-Ն որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Հարցերի վերաբերյալ ընդունված որոշումներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին կատարված հղումները հստակ չեն, նրանցում չեն նշվել հոդվածի մասի համարը և հոդվածի մասի կետի համարը (հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 6 որոշումներ է կայացրել համայնքի 2010, 2011, 2012 և 2013 թվականների բյուջեներում փոփոխություններ կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 17.09.2010թ., թիվ 18-Ն, 13.12.2010թ., թիվ 29-Ն, 18.04.2011թ. թիվ 8-Ն, 19.09.2012 թ. թիվ 10-Ն, 10.04.2013 թ. թիվ 5-Ն, 04.07.2013 թ. թիվ 10-Ն):

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող համայնքի ավագանու 2010-2012 թվականների որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով: Բացի այդ, հացի վերաբերյալ ավագանու 19.09.2012 թ. թիվ 10-Ն, 10.04.2013 թ. թիվ 5-Ն որոշումներում համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները պայմանավորված են եղել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից բյուջեի առանձին հոդվածների գումարներ հատկացնելու հետ, սակայն որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասերի դրույթներին:

- 4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկման վերաբերյալ հարցեր չի քննարկել և համապատասխան որոշումներ չի կայացրել :

Համայնքի բյուջեի կատարման նկատմամբ համայնքի ավագանու կողմից իրականացված վերահսկողությունը սահմանափակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասերի համաձայն համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումները քննարկելով (ավագանու որոշումներ՝ 18.04.2011թ. թիվ 7-Ն, 21.07.2011թ. թիվ 11-Ն, 2011թ. (որոշման ընդունման օրը նշված չէ) թիվ 19-Ն, 18.05.2012թ. թիվ 6-Ա, 19.07.2012թ. թիվ 8-Ա, 10.04.2013թ. թիվ 3):

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և համայնքի 2010 թվականի 3-րդ, 2012 թվականի 3-րդ, 2013 թվականի 2-րդ եռամսյակների բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն, իսկ առանձին դեպքերում բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային հաղորդումները ավագանու քննարկմանն են ներկայացրել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի

35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ուշացումներով (ավագանու որոշումներ՝ 18.04.2011թ. թիվ 7-Ն, 21.07.2011թ. թիվ 11-Ն, 18.005.2012թ. թիվ 6-Ա, 19.07.2012թ. թիվ 8-Ա): Բացի այդ, հարցի վերաբերյալ ավագանու որոշումներում, համայնքի ղեկավարի հաղորդումները ի գիտություն ընդունելու փոխարեն, համայնքի ավագանին որոշումներ է կայացրել այն հաստատելու վերաբերյալ:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով վարկեր չեն ստացվել և այլ ներգրավված միջոցներ չեն օգտագործել:

5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին թվով 12 որոշումներ է կայացրել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ: Ընդունված որոշումներով համայնքի թվով 41 կարիքավոր ընտանիքների հատկացվել են ընդհանուր գումարով 3770.0 հազ. դրամ միանվագ դրամական օգնություններ (ավագանու որոշումներ՝ 11.10.2010թ. թիվ 20-Ա, 12.11.2010 թ. թիվ 24-Ա, 21.12.2010թ. թիվ 30-Ա, 21.03.2011 թ. թիվ 5-Ա, 01.04.2011թ. թիվ 6-Ա, 20.05.2011թ. թիվ 9-Ա, 29.08.2011թ. թիվ 13-Ա, 17.10.2011թ. թիվ 15-Ա, 05.11.2012թ. թիվ 11-Ա, 19.11.2012թ. թիվ 13-Ա, 10.12.2012թ. թիվ 14-Ա, և 21.05.2013թ. թիվ 7-Ա): Ընդունված որոշումներում ոչ ճիշտ հղումներ են կատարվել աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները սահմանելու վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթին: Բացի այդ, որոշումներում համապատասխան գրառումներ չեն կատարվել դրամական օգնության տրամադրման անհրաժեշտության, պատճառի կամ շահառուի կարիքավորության մասին:

6) Համայնքի ավագանին թվով 6 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ: Իսկ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

Հարցի վերաբերյալ ստուգման արդյունքների մանրամասները ներկայացված են սույն ենթաբաժնի 15-րդ կետում:

7) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեմքեր չեն արձանագրվել:

9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 14.12.2010թ. թիվ 27-Ա, 06.12.2011թ. թիվ 22-Ա, 21.12.2012թ. թիվ 17-Ա):

Ավագանու համապատասխան որոշումներով 2011, 2012 և 2013 թվականների համար սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը համապատասխանում են

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին: Իսկ 2011 և 2012 թվականների համար սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը սահմանելու մասին իրավական ակտերում ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները (Հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետ):

- 10) Համայնքում բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև դրանց ստեղծման համար համապատասխան միջոցներ և պայմաններ չունենալու պատճառով, ստուգված ժամանակաշրջանում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 11) Համայնքում բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ստուգված ժամանակաշրջանում բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 12) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը հանված է (08.12.11 ՀՕ-342-Ն):
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 14.12.2010թ. թիվ 26-Ն, 06.12.2011թ. թիվ 21-Ն, 21.12.2012թ. թիվ 16-Ն): Ընդունված որոշումներով հաստատված հավելվածները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական հավար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոքրատառերով: Իրավական ակտերի կետերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, ենթակետերը՝ փակագծերով, իսկ պարբերությունները միջակետերով: Չնայած նրան, որ 2011 և 2012 թվականների տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշումներում հղումներ են կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «<<բ>> ենթակետի դրույթին, սակայն ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները:
- Ստուգված ժամանակաշրջանում տեղական հարկերի տեսակների և դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 14) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի համաձայն համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու վերաբերյալ ավագանին որոշումներ չի կայացրել:

15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ավագանին թվով 6 որոշումներ է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությունների վերաբերյալ, հաստատվել են օտարվող գույքի մեկնարկային գներն ու պայմանները (ավագանու որոշումներ՝ 21.10.2010թ. թիվ 22-Ա, 20.12.2010թ. թիվ 29/1, 24.02.2011թ. թիվ 4, 2011թ. (որոշման ընդունման օրը նշված չէ) թիվ 17-Ա, 20.12.2011թ. թիվ 25, 10.04.2013թ. թիվ 3):

Համայնքի ավագանու 21.10.2010թ. թիվ 22-Ա (արձ. թիվ 14) որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող գազամատակարարման համակարգը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համայնքի ավագանու 20.12.2010թ. թիվ 29/1 որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի հողերից 0.05 հա հողամասը բնակելի կառուցապատման նպատակով աճուրդով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատվել է հողամասի օտարման մեկնարկային գինն ու պայմանները: Սակայն որոշման մեջ չեն նշվել օտարվող հողմասի գտնվելու վայրն (հասցեն) ու ծածկագիրը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ) և ճիշտ չի գրառվել որոշման հերթական համարը:

Համայնքի ավագանու 24.02.2011թ. թիվ 4 որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 4.32 հա վարելահողը (2 լոտ) աճուրդով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը, հաստատվել է հողամասի օտարման մեկնարկային գինն ու պայմանները: Սակայն որոշման մեջ չի նշվել հողամասի օտարման նպատակը, գտնվելու վայրը և ծածկագիրը (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ):

Համայնքի ավագանու 2011թ. (որոշման ընդունման օրը նշված չէ) թիվ 17-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի սեփականություն հանդիսացող <<Canon 4410>> տիպի տպիչ սարքը, համայնքի նորակառույց դպրոցի բացման կապակցությամբ <<Սարակապի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին նվիրաբերելու համար:

Համայնքի ավագանու 20.12.2011թ. թիվ 25 որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն հանդիսացող բենզալցակայանի շենքը (138 քառ.մ.) աճուրդով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատվել է գույքի օտարման մեկնարկային գինը: <<Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գույքի շուկայական արժեքը գնահատվել է «ՊԱԳ ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից, որը և հիմք է հանդիսացել գույքի մեկնարկային գինը հաստատելու համար:

Համայնքի ավագանու 10.04.2013թ. թիվ 3 որոշմամբ համաձայնություն է տրվել պետական սեփականություն հանդիսացող դպրոցի շենքի զբաղեցրած, ինչպես նաև նրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ համայնքի սեփականություն հանդիսացող 2.2207 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու վերաբերյալ:

16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 14.12.2010թ. թիվ 28-Ա, 06.12.2011թ. թիվ 23-Ա, 21.12.2012թ. թիվ 18-Ա):

Որոշումներով հաստատված գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2011, 2012 և 2013 թվականների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին: Համայնքի ավագանու նույն որոշումներով հաստատվել են նաև համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը:

Ստուգված ժամանակաշրջանում գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների թվաքանակի և (կամ) հաստիքացուցակի փոփոխություններ և (կամ) լրացումներ չեն կատարվել և այդ հարցով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին որոշումներ չեն կայացվել:

18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

19) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010, 2011 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշումներ՝ 14.12.2010թ. թիվ 25-Ա, 06.12.2011թ. թիվ 20-Ա, 21.12.2012թ. թիվ 15-Ա):

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջը և սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո մեկշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում չի կատարել համապատասխան փոփոխություն և այն չի ներկայացրել ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

### **1.Ֆինանսների բնագավառ**

1) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների և նրանցում առաջարկված փոփոխությունների որոշումների նախագծերը, բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններն ու եռամսյա հաղորդումները:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականների վերահսկողություն համայնքի ավագանու կողմից չի իրականացվել: Իսկ համայնքի բյուջեների կատարողականների տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը:

3) Համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 մասի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողերի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման պարտադիր լիազորությունները:

2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 6954.8 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 4133.7 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 59.4%-ով, կամ պակաս է հավաքագրվել 2821.1 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 6864.4 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 4506.1 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 65.6%-ով, կամ պակաս է հավաքագրվել 2358.3 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 7239.4 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 3429.2 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 47.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 3810.2 հազար դրամ:

2013 թվականի 9 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 5231.3 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 2659.7 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 50.8 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 2571.6 հազար դրամ:

4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:

6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների կատարումը:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրման և ընթացիկ այլ ծախսերի կատարման համար, իսկ ֆոնդային բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են մասամբ:

Գյուղապետարանում չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջները: 2011-2013թթ. ընթացքում ընթացիկ տարվա համար գնումների պլան չի կազմվել և չի հրապարակվել:

## **2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

1. Համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:



2. Ստուգված ժամանակահատվածում համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթացներ համայնքում չեն իրականացվել:
3. Համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տարամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթացներ չեն իրականացվել:
4. Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվություն չի տրամադրվել:
5. Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չեն ձևակերպվել:
6. Համայնքում ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր չեն հայտնաբերվել և համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
7. Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման, պահպանման և կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
8. Համայնքի ղեկավարի կողմից կատարվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների ամենամյա հաշվառում և համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերի կազմում: Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի սեփականության միայն 2010 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը:
9. Համայնքի ղեկավարի կողմից արտաքին գովազդ տեղադրելու համար թույլտվություն չի տրամադրվել:
10. Համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ռոոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:
11. Համայնքում բազմաբնակարան շենքերի բացակայությամբ պայմանավորված, դրանց կառավարմանն ու պահպանմանն ուղղված գործառույթներ չեն իրականացվել:

### **3. Հողօգտագործման բնագավառ**

1. Սարակապ գյուղական համայնքը կառավարության սահմանաճ կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1931.47 հա, որից վարելահող՝ 127.23 հա, արոտ՝ 1790.03 հա և այլ հողեր՝ 14.21 հա:  
 Գյուղապետարանում առկա էր համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված 43 վարձակալության պայմանագրեր, որոնցից 41-ը կնքվել են 141.6 հա վարելահողերի համար՝ 1319.350 հա գ. դրամ վարձավճարով և 1-ը 3 հա արոտի համար՝ 21.0 հա գ. դրամ վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 54.32 հա վարելահողերը և 1787.03 հա արոտները օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.09.2010–31.12.2010թթ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 776,7 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 390.8 հազ.դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2011թ. բյուջեով նախատեսված 2718,4 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 617.8 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2012թ. բյուջեով նախատեսված 3057,5 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 471.0 հազ դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.01.2013-01.09.2013թթ. ընկած ժամանակաշրջանում բյուջեով նախատեսված 2146.0 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 585.0 հազ. դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2010 թվականին օրենքով սահմանված կարգով աճուրդ-վաճառքով օտարվել է համայնքային սեփականություն համարվող 2.6659 հա վարելահող 948.0 հազ. դրամ գումարով:

2011թվականին օրենքով սահմանված կարգով աճուրդ-վաճառքով օտարվել է համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի այլ հողերից 0.05 հա հողամաս՝ 44.0 հազ. դրամ գումարով և համայնքային սեփականություն համարվող 4.39 հա վարելահող՝ 1875.7հազ. դրամ գումարով:

3. Ստուգման արդյունքում պարզվել է, որ համայնքային սեփականություն հանդիսացող 1.16 հա անջրդի վարելահողը (ծածկագիր 0101-0001-10) անօրինական ձևով օգտագործվում է Սարակապ համայնքի բնակիչ Անդրանիկ Խաչատրյանի կողմից: Համայնքի ղեկավարի կողմից չի կանխվել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը /հիմք՝ ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդված 2-րդ մաս/, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան սահմանվել է պատասխանատվություն:

2011 թվականի մարտի 25-ին կայացած աճուրդ վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված քաղաքացի Հովհաննես Իվանի Ավոյանին 2011 թվականի ապրիլի 20-ի առուվաճառքի պայմանագրով օտարվել է համայնքում սահմանված մեկ հողաբաժնի չափից (2.5հա) պակաս գյուղատնտեսական նշանակության վարելահող (1.385հա, ծածկագիր 08-103-0101-0124), արդյունքում համայնքի ղեկավարի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23՝ կետի պահանջները, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 56՝-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան սահմանվել է պատասխանատվություն:

Համայնքի գյուղատնտեսական տնտեսություններում հաշվառված 844 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 1787.03 հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

4. 01.09.2010-01.09.2013թթ. ժամանակահատվածում Համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5. Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:

6. Պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 8 գետդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

#### **4. Տրանսպորտի բնագավառ**

1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:

2) Համայնքում հասարակական տրանսպորտի, ինչպես նաև համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ ոլորտի գործունեության կազմակերպման և կառավարման ուղղությամբ գործառույթներ չեն իրականացվել:

3) Իրավասու մարմինների կողմից համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման, հանման հաստատման և թույլատրման առաջարկություններ չեն ստացվել և այդ ոլորտում համայնքի ղեկավարի կողմից գործառույթներ չեն իրականացվել:

4) Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհների վերաբերյալ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

#### **5. Առևտրի և ծառայությունների բնագավառ**

Համայնքի տարածքում գործում է առևտրի 2 օբյեկտ, իսկ հանրային սպասարկման և կենցաղածառայության օբյեկտներ չկան:

1. Համայնքի ղեկավարի կողմից ստեղծված խումբը, առևտրի օբյեկտներում պարբերաբար իրականացրել է շրջայցեր, գրանցել է նկատված խախտումները, կատարել է զգուշացումներ և առևտրի օբյեկտներից մեկի նկատմամբ սահմանել է տուգանք՝ 4000 դրամի չափով:

2. Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի համար ՀՀ կառավարության սահմանված կարգով տրվել է 2 թույլտվություն:

3. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու համար դիմողներ չեն եղել և համապատասխան թույլտվություններ չեն տրվել:
4. Առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու համար թույլտվություններ չեն տրվել՝ դիմողներ չլինելու պատճառով:
5. Համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար դիմող չի եղել:
6. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազի վաճառքի թույլտվություն համար դիմողներ չեն եղել:

## **7. Այլ բնագավառներ**

1) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են ավագանու 44 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 71 հարցեր և ընդունվել նորմատիվ ու անհատական բնույթի նույնքան որոշումներ: Այդ թվում՝ 2010 թվականի 4 ամսում անցկացվել է ավագանու 10 նիստ, ընդունվել է 16 որոշում, 2011 թվականին՝ 17 նիստ, ընդունվել է 26 որոշում, 2012 թվականին՝ 12 նիստ, ընդունվել է 19 որոշում, իսկ 2013 թվականի 8 ամսում՝ 5 նիստ, ընդունվել է 10 որոշում:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 3 գրանցամատյաններ, որոնք սահմանված կարգով համարակալված, թվակարգված և կնքված են համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարի կողմից ոչ միշտ է ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու կողմից 2010-2013 թվականներն ընդունված առանձին որոշումներ ՀՀ Շիրակի մարզպետարան չի առաքվել, իսկ առանձին դեպքերում թույլ է տրվել օրենքով սահմանված 7-օրյա ժամկետից առաքման ուշացումներ: Այսպես, 2010 թվականի 8 ամիսներին համայնքի ավագանու կողմից ընդունված 16 որոշումներից ՀՀ Շիրակի մարզպետարան է առաքվել 6-ը, 2011 թվականին ընդունված 26 որոշումներից՝ 6-ը, 2012 թվականին ընդունված 19 որոշումներից՝ 7-ը, իսկ 2013 թվականի 4 ամիսներին ընդունված 10 որոշումներից 4-ը:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ բնույթի առանձին իրավական ակտեր /համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում, համայնքի սեփականություն համարվող գույքի աճուրդով օտարում և այլն/ պետական իրավական փորձաքննության համար չի ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են նկատվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց

առնվազն յոթ օր առաջ, իսկ արտահերթ նիստեր հրավիրելու դեպքում՝ նիստից մեկ օր առաջ (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածներ):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով ավագանու նիստերի օրակարգերը հաստատվել են ավագանու համապատասխան որոշումներով: Սակայն այդ որոշումներում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նշված դրույթին հղում կատարելու փոխարեն ոչ ճիշտ հղումներ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ կետերի դրույթների:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարի կողմից պահովվել է ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ ավագանու նիստերի անցկացումը:

Ավագանու նիստերի բոլոր արձանագրություններում համապատասխան նշումներ են կատարվել ավագանու հերթական կամ արտահերթ նիստ գումարելու մասին:

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում չի տարվել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Չնայած նրան ավագանու բոլոր նիստերի արձանագրություններում նշվել է ավագանու անդամ Վրոյր Մկոյանի նիստին ներկա գտնվելու մասին, սակայն նրա կողմից ավագանու ոչ մի որոշում չի ստորագրվել, ավագանու ոչ մի որոշում չի ստորագրվել նաև ավագանու նիստերին ներկա գտնված ավագանու նորընտիր անդամ Աղասի Կիրակոսյանի կողմից: Ավագանու նշված անդամների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու փաստերը ավագանու կողմից քննարկման առարկա չեն դարձել և նրանց ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ, 2-րդ մաս):

Համայնքի ղեկավարը չի ապահովել ավագանու կանոնակրգի 3-րդ կետով սահմանված համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստի անցկացման ընթացակարգը, համաձայն որի ավագանու նորընտիր անդամները հանդիսավոր պայմաններում անհատական կարգով տալիս են երդում և ստորագրում են երդման տեքստը:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներին բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ (ավագանու որոշումներ՝ 11.10.2010թ. թիվ 20-Ա, 13.12.2010թ. թիվ 27-Ա, 09.12.2011թ. թիվ 24-Ն, 19.01.2012թ. թիվ 3-Ն, 2, 17.01.2013թ. թիվ 1-Ն և այլն, համայնքի ղեկավարի որոշումներ՝ 23.11.2010թ. թիվ 9, 21.01.2011թ. թիվ 1, 04.02.2011թ. թիվ 3, 18.07.2011թ. թիվ 9, 19.01.2012թ. թիվ 1 և այլն):

Առանձին դեպքերում ընդունված իրավական ակտերի բնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տարբեր նշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 18.04.2011թ. թիվ 7-Ն, 21.07.2011թ. թիվ 11-Ն, 2011 թ. (որոշման ընդունման օրը նշված չէ) թիվ 19-Ն և այլն):

- 2) Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1' կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական ակտերն է սահմանված եռօրյա ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:
- 3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը մշակել և նույն օրենքի 53-հոդվածով սահմանված ընթացակարգով համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 25-ի նիստի հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2014 թթ. զարգացման ծրագիրը:
- 4) Գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 18-ի թիվ թիվ 8 որոշմամբ: Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջը և գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը: Իսկ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններ չեն հաստատվել՝ այդպիսիք չլինելու պատճառով:
- 5) Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանումների և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների բացակայությամբ պայմանավորված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 6) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2011, 2012 և 2013 թվականների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը: Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների սահմանված կարգով հաստատված և գործողության մեջ դրված 2011, 2012 և 2013 թվականների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:
- 7) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 8) Համայնքում համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված համայնքի ղեկավարի կողմից դրանց խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարի կողմից համայնքի ղեկավարի տեղակալի և գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոններում նշանակումներ և ազատումներ չեն կատարվել:
- 10) Համայնքում բյուջետային հիմնարկների բացակայությամբ պայմանավորված, համայնքի ղեկավարի կողմից այդ հիմնարկների ղեկավարների պաշտոններում նշանակում կատարելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել և այդ պաշտոններում նշանակումներ ու ազատումներ չեն կատարվել:

- 11) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 12) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել և միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:
- 13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի կողմից թվով 6 առաջարկություններ են ներկայացվել համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու, օտարման մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու վերաբերյալ (ստուգման արդյունքները ներկայացված են սույն ակտի 6-րդ էջի 15-րդ կետում):
- 14) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել:
- 15) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի փողոցների, հրապարակների, գրոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություններ չեն ներկայացվել:
- 16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից թվով 4 որոշումներ են կայացվել անշարժ գույքի հասցեավորման վերաբերյալ (23.11.2010թ. թիվ 9, 19.01.2012թ. թիվ 2, 04.02.2013թ. թիվ 3 և 25.04.2013թ. թիվ 5): Ընդունված որոշումներում համապատասխան հղումներ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներին:
- 17) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել են 39 որոշումներ և արձակվել 7 կարգադրություններ, որոնք սահմանված կարգով արձանագրվել են համարակալված, թելակարված և համայնքի ղեկավարի կողմից կնքված համապատասխան գրանցամատյաններում:
- Համայնքի ղեկավարի առանձին որոշումներում և կարգադրություններում առկա են «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման առանձին թերություններ:
- Համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի և բենզալցակայանի շենքի օտարմանը վերաբերվող համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 25-ի թիվ 4, թիվ 5 և 2012 թվականի փետրվարի 21-ի թիվ 3 որոշումներում չեն նշվել հողամասերի և բենզալցակայանի շենքի օտարումների համար հիմք հանդիսացած մրցույթների արդյունքներն ամփոփելու մասին մրցութային հանձնաժողովների կողմից կազմված արձանագրությունների հերթական համարներն ու ամսաթվերը, հղումներ չեն կատարվել հարցերի վերաբերյալ համայնքի ավագանու կողմից ընդունված համապատասխան իրավական ակտերին և համայնքի սեփականության գույքն օտարելու համայնքի ղեկավարի իրավասությունը սահմանող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթներին:

Աշխատակազմի քարտուղարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված իր լիազորությունները և հրամաններ է արձակել համայնքի ղեկավարին ամենամյա արձակուրդ տրամադրելու վերաբերյալ (աշխ. քարտուղարի հրամաններ՝ 01.10.2010թ. թիվ 7, 01.10.2012թ. թիվ 5):

18) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:

20) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:

21) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 7 որոշմամբ համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 10 որոշմամբ համայնքում ստեղծվել և գործում է արտակարգ իրավաճիկների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման հանձնաժողով:

Իսկ համայնքի ղեկավարի 2013 թվականի փետրվարի 20-ի թիվ 4 որոշմամբ համայնքում 2013 թվականի մարտի 19-ին անցկացվել են քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժություններ:

22) Գյուղապետարանում վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և սահմանված կարգով կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

23) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

24) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվել են քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության են առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

25) ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ կետի պահանջներին համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ համայնքում խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով չի ստեղծվել:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու վերաբերյալ իրավական ակտեր չեն ընդունվել:



26) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:

27) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ:

Համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունները խախտելու դեպքեր չեն արձանագրվել:

### ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ









1. Գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 18-ի թիվ 8 որոշմամբ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն անհրաժեշտ է մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել գյուղապետարանի աշխատակազմի նոր կանոնադրությունը:
2. ՀՀ կառավարության սահմանած կարգով աշխատակազմում չեն վարվում համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման գրանցամատյաններ:
3. Ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերը արձանագրվել են համապատասխան գրանցամատյաններում: Սակայն իրավական ակտերի հաշվառման մատյանների բացակայությամբ պայմանավորված ուսումնասիրության ենթարկված համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների, համայնքի ղեկավարի կարգադրությունների և աշխատակազմի քարտուղարի հրամանների համադրում չի իրականացվել:
4. Աշխատակազմում առանձնացված ստորաբաժանում (բաժին) չլինելու պատճառով, գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը հաստատելու վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել:
5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Սարակապի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2-1), գլխավոր մասնագետ-հաշվապահ (ծածկագիր՝ 2.3-1) և առաջատար մասնագետ (ծածկագրեր՝ 3.1-1): Նշված համայնքային ծառայության պաշտոններն օրենքով սահմանված կարգով զբաղեցված են:

Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2011, 2012 և 2013 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Սարակապի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում

նշված անվանումներին: Համայնքային ծառայողների մասով 2011-2013 թվականների համար հաստատված պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

6. Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 6-Ա որոշմամբ, որոնց բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:
7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը կատարվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի» առանձին դրույթների թերություններով: Համայնքային ծառայողների 3 անձնական գործերում բացակայում են համայնքային ծառայողների աշխատանքային գրքույկները, համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 6-Ա որոշմամբ հաստատված գլխավոր մասնագետ-հաշվապահի և առաջատար մասնագետի պաշտոնների նոր անձնագրերը, պաշտոնի նշանակելու և դասային աստիճան շնորհելու մասին առանձին իրավական ակտերի քաղվածքները, ատեստավորման թերթիկները և ատեստավորման հանձնաժողովի որոշումների պատճենները, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրամադրվող դատվածության բացակայության մասին տեղեկանքները, համայնքային ծառայողների կիսամյակային հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անմիջական ղեկավարների եզրակացությունները, համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին և գործունեության գնահատականներին ծանոթացված լինելու մասին վկայող փաստաթղթերը: Անձնական գործերում առկա փաստաթղթերի վերգրերը լրացված են թերի իսկ գործերում առկա փաստաթղթերը չեն համարակալվել:
8. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 16-Ա որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը, իսկ համայնքի ղեկավարի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 11 որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն, հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական նոր կազմը և սահմանված կարգով ուժը կորցրած է ճանաչվել հարցի վերաբերյալ համայնքի ղեկավարի նախորդ որոշումը:
9. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի օրինակելի աշխատակարգերի հիման վրա հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը:
10. ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 18-ի թիվ 9 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և ապահովվել է դրա պատշաճ իրագրելումը աշխատակազմի աշխատակիցներին:

11. Աշխատակազմում չեն վարվում «Համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման», «Համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման» և «Համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման» համարակալված մատյաններ:
12. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ մրցույթի արդյունքներով համայնքային ծառայության պաշտոնների նշանակված անձանց կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությանը և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:
13. Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև N N 1, 2) տվյալներն արժանահավատ են:
14. Համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներն ու ատեստավորումներն անցկացվել և փաստաթղթերի փաթեթները կազմվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն և 2006 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու և համայնքային ծառայողների ատեստավորման կարգերին համապատասխան:
15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:
16. Ստուգված ժամանակաշրջանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ Շիրակի մարզի Սարակապի գյուղապետարանում համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության և կադրային գործի վարման բնագավառում ուսումնասիրություններ չեն կատարվել:

 ՌՌԻԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
 ԱՐՏԱՎԱՋԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ  
 ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
 ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
 ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ  
 ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ  
 ԶՈՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ  
 ԱՐԾՐՈՒՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ